Եգիպտոսի, և բովանդակ երկիր նոցին ընդ Պաղեստինոյ եւ Սուրիոյ անկաւ ընդ իշխանութեամբ Օսմանեան հզօր Պետութեան, որոց տիրեցին և տիրեն ցարդ կառավարեալ 'ի ձեռն կուսակալաց։ Արաբացի Ցոյն պատմիչն յառաջ բերէ աստանօր, առեալ 'ի Լատին ճանապարհորդաց։ «Սուլթան Սէլիմ որդի Պայազիտայ, յարշաւանի իւրում յԵգիպտոս, եկն յԵրուսաղէմ, եւ ոմանք յայլազգեաց ազգ արարին նմա, թէ Լատին կրօնաւորք որք բնակին յԵրուսաղէմ, ունին անթիւ ոսկիս եւ գանձս բազումս, եւ Սուլթանն կոչեալ զնոսա առաջի իւր խնդրեաց 'ի նոցանէ զգանձն, և նոքա ժխտեցին թէ՝ չունիմք զայդպիսի իրս, իսկ մի ոմն 'ի թուրքաց ասէ՝ կրօնաւորքդ թաղեալ են ըզգանձս իւրեանց յերկիր։ Սէլիմ հրամայեաց բանտարկել զնոսա 'ի բերդն՝ մինչեւ խոստացին ցուցանել զտեղի գանձուն, և պատուիրեաց չտալ նոցա կերակուր, բաց 'ի չորաբեկ հացէ և սակաւ ինչ ջրոյ, և մնացին անդ ամիսս 27, և բազումք մեռան 'ի քաղցու և 'ի դառն տանջանաց, զոր տային նոցա պահապանքն, սակայն նոքա եւ ոչ մի ինչ յայտնեցին զոր պահեալ էին, և Սուլթանն յորժամ պատրաստէր ճանապարհորդել 'ի մայրաքաղաքն, գթացեալ արձակեաց զնոսա»։

Զնոյն յաւելու և Մարինոս Լատին այսպէս, 'ի բանտարկիլ Լատին կրօնաւորացն Երուսաղէմի հրամանաւ Սէլիմայ արքային, զսեփհական տեղիս մեր 'ի տաճարին Սուրբ Յարութեան՝ յանձնեցաք 'ի պաշտպանութիւն Հայոց։ և մասն ինչ 'ի կենաց փայտէն պահեալ 'ի Սեղանի եկեղեցւոյն, տուեալ 'ի Հերակլէ կայսեր (628)։ իսկ Հայք ասէ՝ կարծելով թէ՝ այլ եւս ոչ դառնան Լատինք 'ի տեղիս իւրեանց, զնաչն զոյն առեալ առաքեցին 'ի հայրենիս իւրեանց։ զոր յետոյ իբր թէ մեծաւոր նոցին մեծ աշխատութեամբ և ծախիւք 'ի ձեռս բերեալ, վերստին եդեալ է 'ի նոյն սեղանի։ եւ դարձեալ՝ 'ի բանտարկիլ նոցա 'ի պատերազմին Կրետէ կղզւոյն, անյայտ եղեալ է խաչն այն, և այլ եւս ոչ կարացեալ են գտանել։ Ահա այս է չափ երախտագիտութեան Լատին կրօնաւորաց։

Զու արարեալ Սէլիմայ 'ի Պաղեստինէ եկաւ 'ի Կոստանդինուպոլիս, ուր եդիտ զդեսպանս թագաւորին Սպա-